չտուաւ այդ եպիսկոպոսին՝ պատրիարքին մեռնելէն վերջը, և ոչ երջանիկ կեանք. վասն զի քսան օրէն ետև ինքն այլ մեռաւ։ Աստուած իր ծածուկ իմաստութեամբ գիտէ թէ որչափ ստոյգ էր այդ եպիսկոպոսին համար ըսուածն։ Իսկ պատրիարքն՝ որոյ համար էր խօսքերնիս, գիտուն քահանայ մ'էր, լաւ տեղեակ Ս. Գրոց և զանոնք յաջող բացատրող։ Բայց կային նախանձոտք իր բարի համբաւոյն տարածմանն համար, և կ'ըսէին թէ յանցաւոր եղած էր ոչ բարոյական վարքով։ Այս զրոյցս հանեցին իրեն անմեղութեան ամենէն աւելի նախանձոտքն։ Գրոյս հեղինակն (ինքն Աբուսահլ) վկայէ, թէ հանդիպեցաւ Ասկալոնացի Ապուլ Գասիմ Խալիլ փիլիսոփայ բժշկի, որ կ'ըսէր, թէ տեսեր էր զպատրիարքը՝ Ազ-Զուհրիի վանքում եղած ատեն, իր խըցկան մէջ, և անարատ գտեր է։ Այս զրոյցս իր Ասորիս (Եգիպտոսէ յԵրուսաղէմ) երթալէն և իր մահուանէն վերջը տարածուեցաւ։ Մարայ զատիներուն գլխաւորին (որ էր Ալ-Ազզ Հասան իպն Սալամա՝ Պախիլանի մականուանելոյ) տանը մէջ՝ ես այս գրոց խեղճ հեղինակս՝ հանդիպեցայ (վերոյիշեալ) Ապուլ Գասիմի, Շաբվալ ամսոյ 27ին, յամին 568» (Հիճր. իսկ Քրիստոսի 1173)»։

Աբուսահլի այս խօսքերու մասին քանի մը դիտողութիւններ ընելէ յետոյ պիտի ծանօթագրենք Եգիպտոսի պատրիարքին Երուսաղէմէ դուրս հիմնարկած Ս. Սարգսի վանքը, ցոյց տալով նաև անոր հիմնարկուած հաւանական տեղը։

Ըստ Աբուսահլի, պատրիարքը իր աթոռանիստ Ս. Յակոբ եկեղեցիէն 1168–69ին կը վտարուի ու կը հաստատուի Հարա Զաւիլա թաղին Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցին։

Ուրիշ արաբական պատմական աղբիւրներէ հասկցանք թէ նուպիական սևերը՝ Ֆաթիմեանց կողմը ըլլալով՝ պալատական իրենց ցեղակիցներուն՝ Էյուպեանց դէմ կազմակերպուած ապըստամբութեան առթիւ, միացած էին Սալահէտտինի իշխանութիւնը տապալելու դաւադրական շարժումներուն. արդ գիտենք թէ Հայերն ալ Ֆաթիմեանց ի նպաստ կը գործէին, և այդ պատճառաւ քուրտերը և զուզերը կը յարձակէին Հայոց վրայ ու կը վտարէին զանոնք իրենց տեղերէ. ուրեմն ի՞նչպէս կ'ըլլայ որ մի և նոյն նպատակի ծառայող սևերուն դէմ «զունդ մի քրիստոնեայ Հայոց» վրայ կը հանին. անոնցմէ շատերը կ'սպաննեն և անոնց Ալ-Համրայ թաղը անբնակ մնալով՝ մշակութեան երկիր կը դառ-